**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

«27» «հուլիս» 2022 թ. № 262-Ա

ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թափոնների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Ն որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Ձկնարդյունաբերության թափոնների կառավարման ուղեցույցը»՝ համաձայն հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

7/27/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«27» «հուլիս» 2022թ.

ք. Երևան

Հավելված

Շրջակա միջավայրի նախարարի

2022 թվականի հուլիսի «27» N262-Ա հրամանի

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

### 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Ձկնարդյունաբերության թափոնների կառավարման ուղեցույցը (այսուհետ՝ ուղեցույց) տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ձկնարդյունաբերությամբ զբաղվող կազմակերպությունների վրա՝ դրանցում գոյացող թափոնների հաշվառման, օգտահանման կամ հեռացման՝ վնասազերծման, ոչնչացման, թաղման դեպքում:

2. Սույն ուղեցույցի մշակման նպատակն է ձկնարդյունաբերության թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության համար սահմանված օրենսդրական պահանջներին և կանոններին ծանոթացնելը, դրանց չպահպանման համար սահմանված պատասխանատվության միջոցների վերաբերյալ իրազեկելը, ինչպես նաև ձկնարդյունաբերության թափոնների վերամշակման, օգտահանման եղանակների, դրանց բնապահպանական, տնտեսական վնասների և օգուտների մասին ծանուցելը:

### 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**1) ձկնարդյունաբերություն՝** տնտեսական գործունեություն, որը կապված է ձկնաբուծության, արդյունագործական ձկնորսության, ձկնամթերքի առևտրի, ձկնամշակման կամ ձկնամթերքից ստացվող ապրանքների արտադրության հետ.

**2) ձկնամշակում՝** տնտեսական գործունեություն, որը կապված է ձկնամթերքի սառեցման, աղադրման, խոհարարական, պահածոյացման կամ ծխեցման եղանակով մշակման (վերամշակման) և ձկնկիթի, ձկան յուղի, սպիտակուցային խտանյութերի,

սպիտակուցային ձկնկիթի, կերային և տեխնիկական արտադրանքի արտադրության հետ.

**3) ձկնամթերքի թափոններ**՝ ձկնային սննդամթերքի արտադրության համար ոչ պիտանի սննդային (պարենային) հումք կամ ձկնային սննդամթերքի արտադրության ընթացքում գոյացած՝ տվյալ արտադրանքի չօգտագործված մնացորդներ.

**4) հիդրոլիզատ ձկնային սննդամթերքից**՝ մթերք, որը ստացվում է ձկան հյուսվածքների հիդրոլիզի (ջրատարրալուծման) արդյունքում.

**5) ձկան յուղ**՝ մթերք, որը պատրաստված է ձկան ճարպ պարունակող հումքից՝ սննդային հավելումների և բուրավետիչների ավելացմամբ կամ առանց դրանց.

**6) ձկնալյուր**՝ մթերք, որը ստացվում է ձկնամթերքի կոշտ թափոնների յուղազատման, չորացման և մանրացման արդյունքում:

4. Սույն ուղեցույցում թափոնների գործածությանն առնչվող այլ հասկացությունները կիրառվում են «Թափոնների մասին» օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հասկացությունների իմաստով:

## 3. ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Ձկնարդյունաբերության ընթացքում գոյացող թափոնների օգտահանման համար առավել արդյունավետ տարբերակի կամ դրանց հեռացման էկոլոգիապես անվտանգ եղանակի ընտրության համար նպատակահարմար է թափոնները խմբավորել՝ ընդհանրացնելով դրանց վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Ձկնարդյունաբերության թափոնները՝ կախված ձկնատեսակից և ձկնամշակման եղանակից, բաժանվում են հետևյալ խմբերի.

1) ձկան առաջնային մշակման ընթացքում գոյացող թափոններ՝ գլուխ, պոչ, լողակներ, թեփուկներ, ոսկորներ, կաշի, լորձ, արյուն, ներքին օրգաններ, այդ թվում՝ փորոտիք,
2) ձկնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացների արդյունքում գոյացող թափոններ՝ նստվածքներ, շլամներ, որոնց տեսակը կախված է արտադրատեսակների քանակից և արտադրության տեխնոլոգիական ռեժիմներից:

6. Սույն ուղեցույցի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված թափոնների գոյացման քանակն ուղղակիորեն կախված չէ մարդկային գործոններից, իսկ 2-րդ ենթակետում նշված թափոնների գոյացումը մեծապես կախված է կիրառվող սարքավորումների տեսակից և որակից, աշխատակիցների մասնագիտական հմտություններից, սահմանված նորմերի և ստանդարտների պահանջների կատարումից:

7. Ձկնարդյունաբերության տեխնոլոգիական գործընթացների ընթացքում գոյացող թափոնները կարող են տարանջատվել նաև ըստ թափոնի ագրեգատային վիճակի.

1) ձկան մասնատման, ապխտման կամ աղադրման ընթացքում գոյացող կոշտ թափոններ,
2) սառեցված ձկան հալեցման, լվացման, եփման, ձկնալյուրի արտադրության, ինչպես նաև սարքավորումների սանիտարական մշակման ենթարկելու ընթացքում առաջացող հեղուկ թափոններ,
3) ձկնաբուծական ավազաններում կերի ավելցուկից և ձկան արտաթորանքից գոյացող նստվածքներ, ձկնամշակման ընթացքում օգտագործվող հեղուկների և արտադրամասերից հեռացվող ջրերի ֆիլտրացիայի և յուղազատման արդյունքում գոյացող շլամատիպ թափոններ:

8. Ձկնարդյունաբերական կազմակերպություններում կարող են գոյանալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված հետևյալ թափոնատեսակները.

1) «Պահածոյացված և սառեցված մթերքի մնացորդներ (միս, ձուկ)» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11135100 13 00 4,
2) «Սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11139030 02 00 4,
3) «Փչացած, աղտոտված կամ չմակնշված սննդամթերք» թափոնատեսակի ծածկագիրը՝ 11720400 13 01 4,
4) «Ճարպանջատիչների թափոններ կենդանական յուղեր պարունակող» թափոնատեսակի ծածկագիրը՝ 12500200 00 00 4,
5) «Ոչ լավորակ սառեցված ձուկ» թափոնատեսակի ծածկագիրը՝ 13500100 01 00 5,

6) «Ձկան թեփուկ» թափոնատեսակի ծածկագիրը՝ 13500200 01 00 5,

7) «Ձկան վերամշակման թափոններ» թափոնատեսակի ծածկագիրը՝ 13500300 00 00 5:

## 4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

9. Թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը «Թափոնների մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, իրականացնում են գոյացող, օգտագործվող, վնասազերծվող, այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում: Թափոնների, այդ թվում՝ ձկնարդյունաբերության թափոնների հաշվառումն իրականացնելիս, անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1343-Ն որոշմամբ հաստատված կարգով:

10. Եթե տնտեսական գործունեության արդյունքում գոյացող թափոնների հաշվառման ընթացքում պարզվում է, որ առկա են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված թափոնատեսակներ, ապա տվյալ վտանգավոր թափոնը գոյացնողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 47-Ն որոշմամբ սահմանված կարգով մշակվում և հաստատվում են վտանգավոր թափոնների անձնագրեր՝ դրանք նախապես համաձայնեցնելով շրջակա միջավայրի նախարարության հետ:

11. Կազմակերպությունում գոյացող թափոնները, որոնք հնարավոր չէ օգտահանել, թույլատրվում է տեղադրել «Թափոնների մասին» օրենքով նախատեսված հատուկ հատկացված տեղերում, որոնք նախատեսված և արտոնագրված են այդ նպատակի համար:

12. Այն տնտեսվարողները, որոնք նախատեսում են իրականացնել թափոնների տեղադրում, «Թափոնների մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն

որոշմամբ սահմանված կարգով մշակում և շրջակա միջավայրի նախարարության հաստատմանն են ներկայացնում թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագիծ: Թափոնների տեղադրումը թույլատրվում է լիազոր մարմնի կողմից հաստատված սահմանաքանակների հիման վրա:

13. Համաձայն «Թափոնների մասին» օրենքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող թափոնների ծավալների և որակական բնութագրերի, այդ թափոնների վերամշակման և օգտահանման օբյեկտների առկայության, կիրառվող տեխնոլոգիաների, արտադրական հզորությունների, այդ օբյեկտների տեղակայվածության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման նպատակով, շրջակա միջավայրի նախարարությունը վարում է թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստր: Թափոններ գոյացնող, վերամշակող և օգտահանող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 500-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցվում են վերը նշված ռեեստրում: Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրներում գրանցվող տեղեկություններն անհրաժեշտ են.

1) պետական մարմիններին՝ թափոնների կառավարման արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար,
2) պետական և այլ մարմիններին՝ թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարմանն ուղղված նախատեսվող ծրագրերի իրականացման համար,
3) տնտեսվարողներին՝ իրենց մոտ գոյացող թափոնների բնապահպանական և տնտեսական առումով արդարացված կառավարման, թափոնների վերամշակման և օգտահանման գործունեությամբ զբաղվողների համար հումքային ռեսուրսի առկայության, դրանց քանակի և տեղակայվածության մասին անհրաժեշտ ինֆորմացիայի տիրապետման, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտի տնտեսվարողների կողմից համապատասխան կոոպերացիաների ստեղծման կամ այլ եղանակով համագործակցության համար:

14. Թափոնների պահում կամ տեղադրում իրականացնողները՝ Հարկային օրենսգրքի 8-րդ բաժնի դրույթներին համապատասխան, հաշվարկում և վճարում են

«Թափոնների մասին» օրենքով նախատեսված հատուկ հատկացված տեղերում թափոնների պահման կամ տեղադրման համար բնապահպանական հարկ՝ եռամսյակային համապատասխան տվյալները ներառելով միասնական հարկային հաշվարկներում:

15. Համաձայն «Թափոնների մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ վտանգավոր թափոններ առաջացնող և թափոնների տեղադրում իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ոլորտում լիազորված մարմնին են ներկայացնում վարչական վիճակագրական հաշվետվություններ: «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և հաշվետվության լրացման հրահանգը հաստատված են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2002 թվականի օգոստոսի 22-ի N 112-Ն հրամանով: Հաշվետվությունը ներկայացվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային բաժին:

16. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի ա) ենթակետի՝ վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, վերամշակում, հեռացում, վնասազերծում, տեղադրում, թաղում գործածության տեսակները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

17. «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «14.Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ» բաժնի 1-ին կետի համաձայն՝ վտանգավոր թափոնների գործածությունը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

18. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N121-Ն որոշմամբ սահմանված կարգով:

19. Շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով թափոնների կառավարումն ապահովելու համար տնտեսվարողներն իրենց գործունեության ընթացքում գոյացող վտանգավոր թափոնները փոխանցում են համապատասխան Լիցենզիա ստացած կազմակերպություններին կամ սահմանված կարգով դիմում են

շրջակա միջավայրի նախարարություն՝ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն, այնուհետև Լիցենզիա և Լիցենզիայի համապատասխան ներդիրներ ստանալու համար:

20. Առանց Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիայի վտանգավոր թափոնների (այդ թվում՝ ձկնարդյունաբերության ընթացքում գոյացող) հավաքումը, փոխադրումը, տեղադրումը, պահումը, մշակումը, վերամշակումը, օգտահանումը, հեռացումը, վնասազերծումը կամ թաղումն առաջացնում է Հարկային օրենսգրքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված պատասխանատվություն:

21. Համաձայն «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 040/2016)՝ ձկնային սննդամթերքի արտադրության ընթացքում ստացված ձկան թափոնները հավաքվում են ջրանթափանց և համապատասխան մակնշում ունեցող տարողությունների մեջ և կուտակմանը զուգընթաց հեռացվում են արտադրական տարածքներից: Ձկան թափոնները տարողություններում պահպանվում են սառեցվող խցերում՝ հումքից և պատրաստի արտադրանքից առանձին: Փակ տարողություններում թափոններն առանց սառեցման կարելի է պահել առավելագույնը 2 ժամ:

22. Հում (թարմ) ձկան արտադրության ժամանակ ձկնամթերքի խոտանումից և թափոնների առաջացումից խուսափելու համար պահպանվում են հետևյալ պայմանները.

1) արտադրության գործընթացում ձկնամթերքի աղտոտման բացառումը,

2) արևի և մթնոլորտային երևույթների ներգործությունից պաշտպանությունը,

3) սննդային թափոնների յուրաքանչյուր տեսակի հավաքումն առանձին տարաներում,

4) հավաքված թափոնների անմիջապես (մինչև 2 ժամվա ընթացքում) մշակումը կամ սառեցումը,

5) ձկնամթերքի պահպանման համապատասխան ջերմաստիճանային պայմանների ապահովումը, անմիջապես մշակման հնարավորության բացակայության դեպքում թափոններով տարաների տեղադրումը սառցախցիկներում՝ անկախ դրանց լցվածության

աստիճանից, իսկ 0°C-ից մինչև +5°C ջերմաստիճանի պայմաններում դրանց պահպանումը մինչև 4 ժամ:

6) որպես անասնակեր նախատեսված ձկան թափոնների պահումը հատուկ մակնշված, կափարիչով ամուր փակվող տարաներում և արտադրամասից հեռացումը՝ հերթափոխի ընթացքում առնվազն 1 անգամ,

7) ձկնամթերքում մարդու առողջության համար վտանգավոր՝ կենդանի մակաբույծների և դրանց թրթուրների առկայության, հատակային գրունտով կամ նավթամթերքներով աղտոտման դեպքում նշված տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող ձկնային սննդամթերքը շրջանառության մեջ դնելու հնարավորությունը կանխարգելող միջոցների ձեռնարկումը, օգտահանման համար ոչ պիտանի թափոնների (օրինակ՝ փորոտիք, ձկնկիթ, սև թաղանթ և այլն) խնամքով հեռացումը և ոչնչացումը:

23. Թափոնների ոչնչացման եղանակ կարող է հանդիսանալ դրանց այրումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից և թափոնների թաղումը «Թափոնների մասին» օրենքով նախատեսված հատուկ հատկացված տեղերում:

24. Համաձայն «Թափոնների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք թափոնները տեղաբաշխում են միայն «Թափոնների մասին» օրենքով նախատեսված՝ դրանց համար հատուկ հատկացված տեղերում:

25. Համաձայն քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը Հայաստանի Հանրապետության տարածքում կիրարկելու մասին» N321-Ա հրամանի հավելվածի 70-րդ և 71-րդ կետերի՝ թունավոր և կենսաբանորեն վտանգավոր թափոնների տեղադրումն աղբավայրում արգելված է, իսկ աղբավայրերում կոշտ կենցաղային թափոնների հետ տեղադրվող ոչ վտանգավոր արտադրական թափոնների խոնավությունը չպետք է գերազանցի 85%-ը: Աղբավայրում տեղադրվող թափոնները հարթեցվում և տոփանվում են, այնուհետև մեկուսացվում գրունտի, շինարարական կամ այլ չեզոք թափոնների շերտով:

26. Թափոնների կառավարմանն առնչվող կարգավորումներ սահմանված են նաև Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով.

1) ձկնարդյունաբերության կազմակերպություններում գոյացող կոշտ կենցաղային թափոնների կառավարման հետ կապված հարցերը կարգավորվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով սահմանված կարգով,

2) ձկնամթերքի արտադրությանը և իրացմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, այդ թվում՝ ձկնարդյունաբերության կազմակերպություններում գոյացող թափոնների կառավարման առանձնահատկությունները, սահմանված են առողջապահության նախարարի 2003 թվականի հոկտեմբերի 9-ի N 995-Ն հրամանով:

27. Ձկնարդյունաբերության թափոններ գոյացնող կամ այդ թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սույն ուղեցույցի 4-րդ գլխի 9-26 կետերում ներկայացված իրավական ակտերով սահմանված հիմնական պահանջները չպահպանելը կարող է հանգեցնել նրանց նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

## 5. ՁԿՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՈՒՄԸ

28. Ձկնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացի արդյունք են հանդիսանում հիմնական արտադրանքը, կողմնակի արտադրանքը և արտադրական թափոնները: Ձկան որսից մինչև սննդի մեջ օգտագործելու գործընթացը, թափոնների առաջացումն անխուսափելի է, բայց դրանք գրեթե ամբողջությամբ հնարավոր է վերամշակել և արդյունավետորեն կիրառել՝ առանց տնտեսական և շրջակա միջավայրի բաղադրիչներին հասցվող վնասների: Ձկնամթերքի մնացորդների համալիր վերամշակումը ձկնարդյունաբերության հիմնական խնդիրներից է: Հարցն արդիական է ինչպես մեծ, այնպես էլ փոքր ձկնաբուծական և ձկան վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների համար: Ձկնամթերքի թափոնների վերամշակման և օգտագործման հիմնական խթանը լրացուցիչ եկամուտ ստանալն է:

29. Ապրանքների ստացման համար թափոնների օգտահանման նպատակահարմարությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1) արդյունահանվող ձկան էական մասը վերածվում է թափոնի, իսկ երկրորդային մթերքներից ապրանքների արտադրությունը հնարավորություն է տալիս նվազեցնել հիմնական արտադրանքի ինքնարժեքը,
2) ձկնային հումքի ռացիոնալ օգտագործումը լուծում է մի շարք բնապահպանական խնդիրներ, այդ թվում՝ նվազեցնում կամ կանխում է թափոնների առաջացումը և դրանց հեռացման համար կատարվող ծախսերը:

30. Ձկնամթերքի մշակման ընթացքում գոյացող գրեթե բոլոր թափոնները հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք՝ տարբեր ապրանքների արտադրության համար: Դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքները հնարավոր է օգտագործել՝

1) սննդի արտադրությունում,
2) անասնակերերի արտադրությունում,
3) տեխնիկական նշանակության ապրանքների արտադրությունում,
4) պարարտանյութերի արտադրությունում,
5) կենսահավելումների և կոսմետիկայի արտադրությունում,
6) առողջապահական նպատակներով կիրառվող ապրանքների արտադրությունում:

31. Ձկնամթերքի վերամշակման հիմնական արտադրանք հանդիսանում են ձկնալյուրն ու ձկան յուղը: Դրանց արտադրությունը չի հանդիսանում բարդ գործընթաց և բաղկացած է հետևյալ փուլերից՝

1) ընդունման կետում ձկնամթերքը հետազոտվելուց հետո տրվում է մանրացման,
2) մանրացնող սարքավորման մեջ մշակված, եփված թափոնները տեղափոխվում են յուղազատիչ, ինչը շնեկատիպ կամ վիբրացիոն հարմարանք է,
3) յուղից, ջրից և սպիտակուցներից բաղկացած խյուսն այնուհետև տրվում է ցենտրիֆուգ՝ յուղային էմուլսիան պինդ ֆրակցիայից տարանջատելու համար,
4) յուղազատման և ջրազատման արդյունքում առաջացող պինդ զանգվածը մանրացվում և փաթեթավորվում է որպես պատրաստի արտադրանք՝ ձկնալյուր,
5) յուղաջրային էմուլսիան տրվում է յուղազատիչ սարք, որտեղից ապրանքային ձկան յուղը տրվում է տարայավորման և փաթեթավորման,

6) մնացորդային ջուրը վերադարձվում է վերամշակման փուլ՝ կրկին օգտագործելու համար:

32. Վերամշակվող հումքից ձկան յուղի ելքը միջինում կազմում է հումքի մոտ 10 տոկոսը, իսկ ձկնալյուրը՝ մոտ 20 տոկոսը:

33. Ձկնալյուրը մոխրագույն կամ շագանակագույն մանրահատիկ է, չորացրած ձկան հոտով, կիրառվում է կենդանիների և ձկների համակցված կերերի արտադրության համար: Սննդի արդյունաբերությունում օգտագործվող ապրանքներից է սուրիմի ֆարշը, ինչն ըստ էության հատուկ մշակման ենթարկված ձկնալյուրն է՝ առանց հոտի և համի: Այդ հումքից արտադրված ճանաչված ուտեստներից է «խեցգետնի ձողիկները»:

34. Ձկան յուղը կիրառվում է դեղագործության, մակարոնեղենի, քսուքային նյութերի և ներկերի, լվացող միջոցների (շամպուններ, օճառներ), կաշվից հագուստների արտադրությունում:

35. Ձկնամթերքի սննդային հիդրոլիզատը ֆերմենտացված հիդրոլիզացված արտադրանք է, ինչը ստացվում է ձկան տարբեր տեսակների և ձկնամթերքի թափոնների խորը հիդրոլիզի արդյունքում: Ձկան հիդրոլիզատն իր բաղադրության մեջ պարունակում է դյուրամարս ամինաթթուներ, ինչի շնորհիվ, ի տարբերություն այլ սպիտակուցային մթերքների, գրեթե ամբողջությամբ յուրացվում է օրգանիզմի կողմից՝ դարձնելով տվյալ գյուղատնտեսական ապրանքն անփոխարինելի սննդի, վիտամինների և կերերի արտադրության մեջ: Հիդրոլիզատը չի պարունակում գենետիկորեն ձևափոխված հումք, սինթետիկ կայունացուցիչներ և հակաբիոտիկներ: Ընտանի կենդանիների, թռչունների և ձկների սննդակարգում ձկան հիդրոլիզատի օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել կերի յուրացումը, ապահովել արտադրվող գյուղատնտեսական մթերքի քանակական աճը 10-ից 20 տոկոսով՝ խնայելով կերի վրա ծախսվող միջոցների ավելի քան 20 տոկոսը:

36. Ձկներին կերակրելու համար կարելի է պատրաստել տնտեսապես մատչելի և արդյունավետ կերատեսակ, ինչը բաղկացած կլինի ձկան հիդրոլիզատից և այդ հիդրոլիզատում եփված հացահատիկից, որն իր որակական ցուցանիշներով չի զիջում ձկան թանկարժեք համակցված կերերին: Այն օգտագործվում է կերակրման նույն չափաքանակներով, ինչն ընդունված է չոր համակցված կերի դեպքում:

37. Ձկնամթերքից արտադրվող սպիտակուցային հիդրոլիզատը կիրառվում է նաև լաբորատոր տարբեր փորձարկումների համար՝ սննդային միջավայրի ստեղծման նպատակով:

38. Ձկնաբուծության համար նախատեսված ջրավազաններում գոյացող թափոնը՝ կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածքը, համապատասխան մշակումից հետո կարող է ծառայել որպես բարձրարժեք պարարտանյութ:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ՝

39. Հայաստանի Հանրապետությունում ձկնարդյունաբերության զարգացմանը զուգահեռ առաջնահերթ է դառնում արդյունաբերության այդ ոլորտի թափոնների ճիշտ կառավարման խնդիրը: Հայաստանի Հանրապետությունում 2010-2020 թվականների ընթացքում արտադրված ձկան վերաբերյալ վիճակագրական տվյալները փաստում են արտադրանքի մոտ եռակի աճի (6.5 հազար տոննայից մինչև 19.1 հազար տոննա) մասին, ինչը հանգեցրել է նաև ձկնարդյունաբերության թափոնների ծավալների ավելացման: Թափոնների քանակի ավելացումը տնտեսապես շահավետ է դարձնում դրանց վերամշակումը՝ նվազեցնելով միավոր արտադրանքի հաշվով սարքավորումների վրա կատարված ներդրումների չափը:

40. Ձկնարդյունաբերության թափոնների ոչ ճիշտ հեռացման հետևանքով մեծ վնաս է պատճառվում շրջակա միջավայրին՝ աղտոտվում են մակերևութային ջրերը, հողերը: Չնախատեսված վայրերում, այդ թվում՝ աղբավայրերում լցված թափոնները, դառնում են դրանցով սնվող թռչունների և կենդանիների աղտոտման և ֆիզիոլոգիական այլ վնասների պատճառ:

41. Ձկնարդյունաբերությամբ զբաղվող տնտեսվարողների կողմից թափոնների օգտահանման ճիշտ կազմակերպված գործընթացը հնարավորություն է ընձեռում ստանալ լրացուցիչ եկամուտ՝ միաժամանակ նվազեցնելով շրջակա միջավայրին հասցվող վնասը և խուսափել թափոնների հեռացման վրա կատարվող ծախսերից, բնապահպանական հարկերից, ինչպես նաև օրենսդրության խախտման համար սահմանված տույժերից: